# ԻՐԱՎԻՃԱԿԸ ԳԵՏԱՇԷՆՈՒՄ ՄՆՈՒՄ Է ԼԱՐՈՒԱԾ

**Գետաշէն, 6 Մայիսի, Մ.Տ.Կ.-** Երէկ ամբողջ գիշեր Գետաշէնում շարունակւում էր հրաձգութիւնը: Գիւղի հարաւային մասում հրանօթային կրակից հրկիզուել է չորս տուն, վիրաւորուել են 14 մարդ, որոնցից 9ը շատ ծանր են:

Բնակչութեան տեղահանութիւնը շարունակւում է Ստեփանակերտի ուղղութեամբ:

Մայիսի 4-ին տեղահանուել եւ տեղափոխուել են 109, մայիսի 5ին՝ 212ը, իսկ այսօրուայ համար ծրագրուած է տեղափոխել 1200 մարդ՝ եթէ ստացուի:

Իգոր Մուրադեանի հետ Գետաշէնում են գտնւում երկու ամերիկեան թղթակիցներ, որոնք խիստ յուզուած եւ անհանգստացած են տիրող իրավիճակից եւ պահանջում են, որ իրենց վիճակի մասին տեղեկացուի ԱՄՆի դեսպանը, կամ էլ, գոնէ, Մոսկուայում գտնուող Նիւ Եորք Թայմսի թղթակից Բիլլի Գեյլերը, որը իրազեկ է նրանց ով լինելու մասին:

Այսօրուայ վիճակով Կիրովաբադի բանտում են գտնւում 16 հայ պատանդներ, որոնց ճակատագիրը խիստ մտահոգիչ է:

Երկու օր առաջ Կիրովաբադի բանտից Գետաշէնի յուշահամալիրի մօտ են բերուել երկու հայ պատանդներ, որոնք տանջամահ էին արուած: Շպրտելով դիակները յուշարձանի մօտ՝ զինուորները թոյլ չեն տալիս մօտենալ նրանց: Մօտեցողների վրայ կրակահերթ է բացւում: Ոչ մի կերպ հնարաւոր չի պարզել, թէ ովքեր են տանջամահ արուածները:

ԽՍՀՄ Ներքին Գործերի նախարար Պուգոյի դրդմամբ գետաշէնցիները ստորագրել են այն հեռագրի տակ, որում ասուած է, թէ գետաշէնցիները իրենց կամքով են հեռանում իրենց հողից:

Այսօր 200 մարտունաշէնցիներ գտնուելով Գետաշէնում նոյնպէս սպասում են տեղափոխման: